4 ապրիլի 2013 թվականի N 331 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի 5.5-րդ կետի «ը» ենթակետում «33» թիվը փոխարինել «11» թվով.

2) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.12-րդ կետով.

«5.12. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանն սպասարկելու համար հատկացվում է 20 ծառայողական ավտոմեքենա:».

3) որոշման N 2 հավելվածի՝

ա. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	8.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	20	9	11 » ,

բ. աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին կետով.

«	8.1.	ՀՀ ԳՆ-ի սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	24	4	20	»,

գ. աղյուսակի «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	Ընդամենը	1668	642	1026	»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ